

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը ամերիկահայ թերթերում տպագրել է հետևյալ հայտարարությունը.

«Ամերիկայի մեր սիրելի ժողովրդին.

Հայ մամուլին մեջ (տե՛ս Պայքար, 24 փետրվար 1954, թիվ 45, 14.641) Ազգիս Վեհափառ Հայրապետին, Գեորգ Զ.ի անունով հրատարակված է «շրջաբերական»մը, որուն վերաբերմամբ հետևյալ իրողությունները կարևոր կնկատենք մեր ժողովուրդին ծանուցանելու.—

1) Մենք և կամ Առաջնորդարանս Վեհափառ Հայրապետեն չենք ստացած հրատարակված «շրջաբերական»ը կամ անոր նման ուրիշ որևէ շրջաբերական կամ հաղորդագրություն։

2) «Շրջաբերական»ի բովանդակությունը հիմնված է իրականության անհամապատասխան և թյուր նախադրյալներու և տեղեկությանց վրա, որոնց աղբյուրը մեզի անծանոթ կմնա։ Այսպես, օրինակի համար, մենք որևէ հրահանգ չենք տված մեր թեմի եկեղեցիներուն մեր Եկեղեցվո «տիտղոս»ի մասին, ոչ ալ ավելցուցած ենք որևէ նոր «տիտղոս» կամ «մակդիր» Հայ Եկեղեցվո «պաշտոնական անուն»ին վրա, կամ «հապավում» ըրած անկե։

3) Հրատարակված «շրջաբերական»ի ստորագրության վավերականության մասին ոչինչ գիտենք։

4) «Շրջաբերական»ը գրված է այնպիսի թվականի մը, երբ տակավին Վեհափառ Հայրապետը չէր ստացած անցյալ տարվան հոկտեմբեր 11-ի մեր Թեմական Պատգամավորական ժողովի ատենագրությունը, և անոր կցյալ մեր տեղեկագիրը և ուղերձը։

5) Մեր Եկեղեցվո բարձրագույն իշխանության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իրավասության վերաբերյալ եկեղեցական խնդիրներու մասին մեր կողմե ստացված հրահանգները և հանձնարարությունները մեզ համար նվիրական են իհարկե, և այդպես պետք է ըլլան մեր եկեղեցվո բոլոր պաշտոնյաներուն և ժողովրդյան համար։

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Փետրվար 26, 1954»

Մենք չենք ցանկանում բանավեճ սկսել Տիրան սրբազանի հետ, որովհետև այդ չի պատշաճում Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնական ամսագրին — մեր նպատակն է ո՛չ թե վեճեր սկսել, այլ թյուրիմացությունները պարզել և վեճերը հարթել։

Բացի այդ, Ամենայն Հայոց Հայրապետությունը բազմիցս հրահանգել է և հրահանգում է, որ քաղաքական ներկա սրված իրադրության մեջ Սփյուռքի մեր համայնքները, հնարավորին չափով, խույս տան անօգուտ գժտություններից և սուր պայքարից, քանի որ պարզված է, որ այդ գժտության և անմիաբանության սերմնացանները սնվում են պղտոր աղբյուրներից։

Եվ, վերջապես, Տիրան սրբազանի վերջերս որդեգրած տարօրինակ ընթացքը, նրա դեմ եղած բողոքները, ընտրության օրինականությունը և այլն քննվում են այժմ Գերագույն Հոգևոր Խորհրդում և ամսագիրը կանդրադառնա այդ խնդրին այն ժամանակ, երբոր կհրահանգի Վեհափառ Հայրապետը։ Սրտանց ցանկանում ենք, որ Տիրան սրբազանի մասին եղած մեղադրանքները թյուրիմացություն լինեին։

Սակայն խմբագրությունս վշտով արձանագրում է գերաշնորհ Տ. Տիրան սրբազանի հայտարարության 3-րդ կետի անպատշաճությունը, ուր նա փորձում է կասկածանքի տակ առնել Վեհափառ Հայրապետի շրջաբերականի վավերականությունը։ Սրբազանին պիտի որ հայտնի լինի, որ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը չի տպագրում ոչ մի նյութ, եթե նա չի արժանացել Վեհափառի հավանությանը։ Ինչ վերաբերում է Վեհափառի պաշտոնական շրջաբերականներին, կոնդակներին և այլ գրություններին, ապա նրանք գրվում են անձամբ Վեհափառ Հայրապետի կողմից, և ամսագրի խմբագրությունը իրավասություն չունի նրանց մեջ ստորակետ անգամ փոխելու։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ